Ո՞վ է Սուրբ Հոգին

- **Մեզանից շատերը միգուցե լսել են Սուրբ Հոգու մասին, բայց ոչ Նրա ծառայության:**
- **Մեզանից շատերը միգուցե լսել են Սուրբ Հոգու մասին, բայց ոչ նրան որպես անձ:**
- **Մեզանից շատերը միգուցե լսել են Սուրբ Հոգու մասին:**

Եթե ցանկանում եք ավելի խորը ուսումնասիրել և հասկանալ Սուրբ Հոգու մասին կարդացեք Ավետարան ըստ Հովհաննեսի 14-16 գլուխները:

Հովհաննես 14-16 գլուխներում Հիսուսն օգտագործում է Նա, Նրա և Իր դերանունները 19 անգամ խոսելով Սուրբ Հոգու մասին:

Նոր Կտակարանը ներառում է ավելի քան 90 հղումներ Սուրբ Հոգու մասին. Հռովմիացիների 1-7 գլուխներում Սուրբ Հոգու մասին նշված է միայն ընդամենը չորս անգամ (Հռով. 1:4, 2:29, 5:5, 7:6), իսկ 8րդ գլխում 19 անգամ:

Դեռահասների միայն 33%-է վկայել իրենց հավատկի մասին վերջին 12 ամիսների ընթացքում, Եվ բոլոր երիտասարդական ծառայությունների կեսը մեկ նոր հոգի չեն բերել Քրիստոսին անցյալ տարի.

Եվ այսպես, Ո՞վ է Սուրբ Հոգին

Մենք ավելի արդյունավետ մոտեցում կունենանք, եթե առաջին հերթին տանք այն հարցը, որը գրեթե ոչ ոք չի տալիս. որտեղի՞ց մենք գիտենք, որ Հայրը՝ անձ է: Իսկ Որդի՞ն:

Պատասխանը հետևյալն է. Աստվածաշունչը ներկայացնում է անձը՝ որպես իսկություն, որը կարող է անձնային կամ հարաբերակցական հատկանիշներ ցուցաբերել (օրինակ՝ խոսել, մտածել, զգալ, գործել): Այն, ինչը կատարում է այս անձնային գործողությունները փոխհարաբերությունների մեջ, օրինակ՝ Աստված, հրեշտակները և մարդիկ, անձ է:

Արդյո՞ք Սուրբ Հոգին համապատասխանում է այս չափանիշներին:

(Գործ. 19:1-7)

Եւ մինչ Ապողոսը դեռ Կորնթոսում էր, Պողոսը շրջեց վերին կողմերը և իջաւ Եփեսոս ու այնտեղ մի քանի աշակերտներ գտնելով՝ նրանց ասաց.

2 «Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին ընդունեցի՞ք»:
Նրանք ասացին. «Մենք չենք էլ լսել, որ Սուրբ Հոգի կա»:

3 Եւ նա ասաց. «Ուրեմն ինչո՞վ մկրտուեցիք»: Նրանք ասացին. «Յովհաննէսի մկրտութեամբ»: 4 Եւ Պողոսն ասաց. «Յովհաննէսը ապաշխարել և մկրտուել քարոզեց ամբողջ ժողովրդին և ասում էր, թէ, ով գալու է իրենից հետոյ, նրա՛ն թող հաւատան. այն է՝ Յիսուս Քրիստոսին»: 5 Եւ երբ այս լսեցին, մկրտուեցին Տէր Յիսուսի անունով:
6 Եւ երբ Պողոսը նրանց վրայ ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ. լեզուներ էին խօսում և մարգարէանում: 7 Նրանք շուրջ տասներկու հոգի էին:

Բանալի խոսք.

Եթե ցանկանում եք ավելի խորը ուսումնասիրել և հասկանալ Սուրբ Հոգու մասին կարդացեք Ավետարան ըստ Հովհաննեսի 14-16 գլուխները:

Հովհաննես 14-16 գլուխներում Հիսուսն օգտագործում է Նա, Նրա և Իր դերանունները 19 անգամ խոսելով Սուրբ Հոգու մասին:

(Հով. 14:26)

Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունով, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, եւ կյիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի:

(Հով. 15:26)

Բայց երբոր Մխիթարիչը կգայ, որ ես Հօրիցը կուղարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին, որ Հօրիցն է դուրս գալիս, նա կվկայէ ինձ համար:

Հով. 16:13-14

Բայց երբոր նա՝ ճշմարտութեան Հոգին կգայ, նա կառաջնորդէ ձեզ ամեն ճշմարտութեան մէջ. որովհետեւ իր անձիցը չի խօսիլ, այլ ինչ որ կլսէ՝ կխօսի, եւ գալու բաները կպատմէ ձեզ: 14 Նա ինձ կփառաւորէ:

I. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՁԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՈԳԻՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ և ՀԻՇԵՑՆՈՒՄ Է

Հով. 14:26 - Բայց երբոր Մխիթարիչը կգայ, որ ես Հօրիցը կուղարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին, որ Հօրիցն է դուրս գալիս, նա կվկայէ ինձ համար:

1 Կոր. 2:13 - խօսում ենք՝ ոչ թէ մարդկային իմաստութեան սովորած խօսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներով՝ հոգևորներն հոգևորների հետ համեմատելով:

2. ՀՈԳԻՆ ԽՈՍՈՒՄ Է

Գործ. 8:29 - Հոգին էլ Փիլիպպոսին ասեց. Մօտեցիր և հասիր այդ կառքին:

Գործ. 13:2 - Սորանք երբոր Տիրոջը պաշտօն էին մատուցանում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասեց. Ինձ համար որոշեցէք Բառնաբասին և Սօղոսին այն գործի համար, որ ես դորանց կանչել եմ:

3. ՀՈԳԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Է ԿԱՅԱՑՆՈՒՄ

Գործ. 15:28 - Որովհետև Սուրբ Հոգուն և մեզ հաճոյ երևեցաւ, աւելի բեռ չ'դնել ձեզ վերայ այս հարկաւոր բաներից ջոկ:

4. ՀՈԳՈՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՏՐՏՄԵՑՆԵԼ

Եփ. 4:30 - Եւ մի տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք փրկութեան օրուայ համար:

5. ՀՈԳՈՒՆ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՐԿԱՑՆԵԼ

Եբր. 10:29 - Էլ ո՞րքան աւելի, կարծում էք, սաստիկ պատժի կարժանանայ, նա որ Աստուծոյ Որդուն ոտքի տակ կոխեց, և ուխտի արիւնը պիղծ համարեց որով նա սրբուեցաւ, և շնորհքի Հոգուն նախատեց:

6. ՀՈԳՈՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԵԼ

Գործ. 5:3-4 - Եւ Պետրոսը ասեց. Անանիա, ի՞նչու համար սատանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խօսես Սուրբ Հոգուն, և ագարակի գնիցը թագցնես: 4 Չ՞է որ նա որ կենում էր՝ քոնն էր, և ծախուած էլ քո իշխանութեան տակն էր. Ի՞նչ է՝ որ այս բանը դրիր քո սրտի մէջ. Ոչ թէ մարդկանց սուտ խօսեցիր, այլ Աստուծուն:

7. ՀՈԳԻՆ ԿԱՐՈՂ Է ԱՐԳԵԼԵԼ ԿԱՄ ԿԱՆԽԵԼ ՄԱՐԴՈՒ ԽՈՍՔԸ ԿԱՄ ԾՐԱԳՐԵՐԸ

Գործ. 16:6-7 - Եւ Փռիւգիան և Գաղատացիների երկիրը մանեկան, Սուրբ Հոգուցն արգելուելով որ Ասիայի մէջ Աստուծոյ խօսքը չ՚խօսեն: 7 Երբոր եկան Միւսիայի կողմերը, ջանք էին անում որ գնան դէպի Բիւթանիա, և Հոգին թոյլ չ՚տուաւ նորանց:

8. ՀՈԳԻՆ ՔՆՆՈՒՄ Է ԱՄԵՆ ԻՆՉ և ԳԻՏԻ ԱՍՏԾՈ ՄՏՔԵՐԸ

1 Կոր. 2:10-11 - Բայց մեզ յայտնեց Աստուած իր Հոգովը. որովհետև Հոգին ամեն բաները քննում է, և Աստուծոյ խորքն էլ: 11 Որովհետև մարդկանցից ո՞վ գիտէ մարդի բաները եթէ ոչ մարդի հոգին, որ նորանում է. այնպէս էլ Աստուծոյ բաներն ոչ ով չգիտէ, եթէ ոչ Աստուծոյ Հոգին:

9. ՀՈԳԻՆ ԲԱՇԽՈՒՄ Է ՀՈԳԵՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

1 Կոր. 12:11 - Բայց այս ամենը հէնց միևնոյն Հոգին է ներգործում, ամեն մէկին բաժանելով ինչպէս կամենում է:

10. ՀՈԳԻՆ ՕԳՆՈՒՄ Է ՄԵԶ, ԲԱՐԵԽՈՍՈՒՄ Է ՄԵԶ ՀԱՄԱՐ և ՄԻՏՔ ՈՒՆԻ

Հռ. 8:26-27 - Այսպէս էլ Հոգին օգնում է մեր տկարութիւններին, որովհետև թէ ինչ բանի համար պիտի աղօթք անենք՝ ինչպէս արժան է, չ՚գիտենք. բայց ինքը Հոգին անբարբառ հառաչանքով բարեխօս է լինում: 27 Եւ սրտերը քննողը գիտէ թէ ինչ է Հոգու խորհուրդը. որովհետև Աստուծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխօսում է:

11. ՀՈԳԻՆ ՎԿԱՅՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ ՈՐԴԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հռ. 8:16 - Նոյն ինքն Հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք:

12. ՀՈԳԻՆ ՎԿԱՅՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Հով. 14:26 - Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, և կյիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի:

13. ՀՈԳԻՆ ՓԱՌԱՎՈՐՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻՆ, ՎԵՐՑՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ՔՐԻՍՏՈՍԻՆՆ Է, և ԱՋԴԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Հով. 16:14 - Նա ինձ կփառաւորէ, որովհետև իմիցը կառնէ և կպատմէ ձեզ: